



«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2020թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքույկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Առաջադրանք 1

Արայի և նրա մահվան մասին Շամիրամից՝ պատերազմի մեջ

1. Նշե՛ք առնվազն երկու հայ հեղինակի անուն, որ իրենց ստեղծագործության մեջ անդրադարձել են Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարներին: (2 միավոր)

Վահան Տերյան, Նաիրի Զարյան (կան այլ պատասխաններ ևս):

2. Ըստ տրված հատվածի՝ ինչպե՞ս կարելի է մեկնաբանել Արայի և Շամիրամի հարաբերությունները պատմության տեսանկյունից, այսինքն՝ ինչպիսի՞ն են եղել Հայաստան-Ասորեստան հարաբերությունները տվյալ ժամանակաշրջանում: (4 միավոր)

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը, ժանրին հատուկ գեղարվեստականություն ունենալով հանդերձ, մեզ պատմում է Հայաստանի և Ասորեստանի հարաբերությունների մասին: Հենց առաջին նախադասությունից հայտնի է դառնում, որ հայոց «խնամակալը» ամբողջովին անկախ չէր: Նա Ասորեստանի տիրակալ Նինոսից «շնորհի արժանանալով», այսինքն՝ նրա թույլտվությամբ ու համաձայնությամբ է դառնում իր հայրենիքի կառավարիչը կամ արքան: Ապա, երբ Նինոսին հաջորդում է Շամիրամը, Արան ցանկանում է հրաժարվել Ասորեստանի ենթական լինելուց և ուզում է ինքնուրույնություն ձեռք բերել իր երկրի համար. սա է վկայում նրա՝ Շամիրամի մոտ չգնալը: Վերջինս փորձում է բանակցության միջոցով խնդիրը լուծել: Սակայն Արան չի ընկրկում: Կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ հայոց արքան վստահում է իր երկրի գործությանը, նրան, որ կարող է դիմագրավել Ասորեստանին: Քանի որ Շամիրամի բանակցության փորձերը արդյունք չեն տալիս, նա դիմում է ռազմական ճանապարհին: Եվ պատերազմը ավարտվում է հայոց գորքի պարտությամբ: Այս առասպելը մի դրվագ է հայերի՝ Ասորեստանի բռնակալական կարգին ու իշխանությանը չենթարկվելու, դրա դեմ ընդվզելու պատմությունից:

3. Ընտրե՛ք առասպելի երկու գլխավոր կերպարներից որևէ մեկին և գրե՛ք նրա անունից նամակ մյուսին (Շամիրամից Արային կամ Արայից Շամիրամին): Պահպանե՛ք նամակի ժանրային առանձնահատկությունները: Շարադրանքը պետք է լինի 80-100 բառի սահմանում:(4 միավոր)

Ազատ պատասխան:

4. Արա Գեղեցիկը մարմնավորում է հեթանոս հայերի հավատալիքները մեռնող և հառնող աստծու մասին: Վերհիշելով առասպելի ամբողջ տեքստը՝ պատասխանե՛ք հարցերին:

ա. Ներկայացրե՛ք, թե ինչ սյուժեով է այդ հավատալիքը դրսևորվում տեքստում: (3 միավոր)

Արա Գեղեցիկի մասին պատմող առասպելը իր սյուժետային գծով մարմնավորում է մեռնող ու հառնող բնության և աստծու մասին հնագույն հավատալիքները: Այդ սյուժեն ի հայտ է գալիս առասպելի վերջում: Շամիրամի հրամանով պատերազմում ընկած մարտիկների միջից գտնում են Արայի դիակը, սակայն նրան չեն թաղում: Արայի մարմինը տանում են ապարանք ու դնում բարձր տեղում: Ապա Շամիրամը լուրեր է տարածում, որ իր աստվածները Արային կենդանացրել են՝ նրա վերքերը լիզելով:

- բ. Մովսես Խորենացին, ներկայացնելով հանդերձ հեթանոսական առասպելը, ինչպե՞ս է փորձում այն պատմականացնել: (3 միավոր)

Այս առասպելում իրականությունն ու հորինվածքը այնքան միահյուսված են, որ դժվար է դրանք միմյանցից տարանջատելը: Խորենացին ինքն էլ կարծես ցանկանում է հենց այդ տարանջատումը անել:

Մի կողմից նա ներկայացնում է ավանդազրույցով իրեն հասած Արայի վերակենդանացման հրաշապատումը, մյուս կողմից՝ փորձում է հավաստիություն հաղորդել իր պատմածին, առասպելի մեջ գտնել պատմության հետքը: Ուստի այուժեի ոչ արժանահավատ, հրաշապատում հատվածներին տալիս է բացատրություններ: Արայի վերակենդանացման հրաշքը նա բացատրում է Շամիրամի խորամանկությամբ ու խաբեությամբ: Ոչ թե Արայի նեխած դիակն է հարություն առնում, այլ Շամիրամը իր սիրեկաններից մեկին է ներկայացնում Արայի փոխարեն, որպեսզի թե՛ խաղաղեցնի ժողովրդին և թե՛ ևս մեկ անգամ հաստատի իր աստվածների ուժը: Այսպիսով՝ Խորենացին այսպես ասած առասպելագրերում է հեթանոսական պատումը և նրան հաղորդում պատմական հավաստիություն:

Առաջադրանք 2

Դանիել Վարուժան

Ձոն

1. Բնութագրե՛ք ձոնը որպես բանաստեղծության տեսակ: (1 միավոր)

Ձոնը քնարական բանաստեղծության տեսակ է: Ձոնը ունի գովասանական, փառաբանական բովանդակություն: Ձոնի տարատեսակներ են գովքը և ներբողը:

2. Դանիել Վարուժանի բանաստեղծական ո՞ր ժողովածուից է այս բանաստեղծությունը: (1 միավոր)

«Ձոն» բանաստեղծությունը «Ցեղին սիրտը» ժողովածուից է:

3. Նշե՛ք Դանիել Վարուժանի չորս բանաստեղծական ժողովածուների վերնագրերը: (2 միավոր)

Դանիել Վարուժանի բանաստեղծական ժողովածուներն են՝ «Մարտուններ», «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր», «Հացին երգը»:

4. Բանաստեղծությունից դու՛րս գրեք երեք տարբեր պատկերավորման միջոցի օրինակ՝ դիմացը նշելով տեսակը: (3 միավոր)

Որբ տունս – մակդիր

Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն... – համեմատություն

Գրիչս եղավ անթրոց սրտերու հնոցի... – փոխաբերություն

(Կան այլ պատասխաններ ևս):

5. Որտեղի՞ց է Դանիել Վարուժանը վերցրել «Ընդ եղեգան փող» նախաբանով տողը, որ կրկնվում է ամբողջ բանաստեղծության մեջ: (1 միավոր)

Դանիել Վարուժանը իր բանաստեղծության մեջ գործածում է Մովսես Խորենացու «Վահագնի ծնունդը» օրհներգի մի տողը՝ «Ընդ եղեգան փող բոց ելաներ»:

6. Ի՞նչ սկզբունքով է կառուցված «Ձոն» բանաստեղծությունը: Մեկնաբանե՛ք բանաստեղծական տների կապակցման եղանակը:

«Ձոն» բանաստեղծությունը կառուցված է կրկնությունների սկզբունքով: Բանաստեղծությունը ունի 5 տուն, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 6 տողից: Տների բոլոր տողերը համապատասխանաբար

կապված են միմյանց հետ կրկնվող բառերի ու բառակապակցությունների միջոցով, օրինակ՝ բոլոր տների առաջին տողը (բացառությամբ վերջինի) գործածում է «եղեգնյա գրչով երգեցի...», երկրորդ տողերը՝ «Քեզի ընծա...» կամ «Ձեզի ընծա...», վերջին տողերը՝ «Ընդ եղեգան փող...» կրկնվող կադապարները և այլն: Ամբողջ բանաստեղծության մեջ ըստ էության կրկնվում է առաջին տունը՝ յուրաքանչյուր անգամ, սակայն, արտահայտելով նոր իմաստ: Ինչպե՞ս է դա տեղի ունենում: Բնաստները փոփոխվում են կրկնվող կառույցներում հայտնվող փոփոխվող միավորների միջոցով:

7. Բացատրե՛ք 2-րդ և 5-րդ տների ավարտական տողերի («Ընդ եղեգան փող ո՛րը ելաներ» և «Ընդ եղեգան փող բոց ելաներ») կապը տվյալ բանաստեղծական տների բովանդակության հետ՝ համապատասխանաբար: (4 միավոր)

Բանաստեղծության բոլոր տները միասին կազմում են մեկ իմաստային ամբողջություն, սակայն յուրաքանչյուր տուն ինքնին առանձին իմաստ ու տրամադրություն է արտահայտում: Եվ այդ տրամադրության ստեղծմանը նպաստում է տվյալ տան տողերի փոխկապակցվածությունը:

Այսպես՝ երկրորդ տունը ընծայելով ընտանիքից ու հայրենիքից հեռացած «հայ պանդուխտներ»-ին, «հեզ պանդուխտներ»-ին՝ հեղինակը տունն ավարտում է «Ընդ եղեգան փող ո՛րը ելաներ» տողով: Տողի մեջ փոխված միակ բառը՝ «ողբը», կապվում է այդ պանդուխտներին կարոտող հարսների սպասումի ու հուսահատության հետ:

Հինգերորդ տան ավարտական տողը՝ «Ընդ եղեգան փող բոց ելաներ», խորհրդանշում է «հայ մարտիկներ»-ի, «քաջ մարտիկներ»-ի վրեժն ու պայքարը: Այդ պայքարի ունակ ոգին է, որ եղեգնյա գրիչը վերածում է «անթրոց սրտերու հնոցի»-ի: Ինչո՞վ են «պայքարն» ու «բոցը» առնչակցվում միմյանց: Այս տան մեջ է, որ Վարուժանը Խորենացու ավանդած «Վահագնի ծնունդ»-ից փոխառած տողը ներկայացնում է անփոփոխ, այսինքն՝ շատ ուղիղ հղում է անում ռազմի ու հաղթանակի հեթանոսական աստված Վահագնին, որի տարերքը կրակն է:

Կարծես Վարուժանը իր ընծայումներով կոչ է անում հայ պանդուխտներին վերադառնալ իրենց «որբ տունը» և վերածվելով մարտիկների՝ ետ բերել «հին հայրենիքի» փառքն ու լույսը, Վահագնի ուժն ու զորեղությունը: